

են Երուսաղէմի այս վանքերը, բայց Յուդայի սկիզբը եւ ներածականի առաջին մասին մէջ իբր հիմնադիր կը յիշուին Ս. Գրիգոր Լուսաւորչի, Մեծն Ներսէսի եւ Տրդատ քաղաւորի անունները. անհաւանական չէ Գ. դարուն ասոնց ալ վանքերու շինութեան մասնակցութիւնը Երուսաղէմի մէջ, բայց Յուդայի բովանդակութիւնը յայտնապէս ցոյց կու տայ թէ նոյն վանքերը առաւելապէս հայ նախարարութեանց կողմէն շինուած են բիւզանդական շէնքերու շարքին: Վանքերից Յուդայը ու յարակից ներածական մասը ձեռնմխութենէ զերծ մնացած չէ, անոր մէջ կրկնութիւններ կան եւ անորոշութիւններ: Յուդայի ներդրումները Անաստաս վանականին սալով մեկտեղ՝ ունակ ներածական մասը ուրիշի կողմէն յաւելուած կը նկատեն, բայց հաւանական է որ այդ մասն ալ նոյն ներդրումը գրած է իբր պատմական նախընթաց դէպքեր, եւ ուրիշ մ'ալ յաւելումներ մտցուցած է. կան ցուցակներ, ինչպէս Վենետիկի 1624 ի ձեռագիրը, որ չունին ներածական մասը, այլ միայն Վանքերից պարզ Յուդայը. այդ պատճառաւ ներածականը կը նկատուի անվանքեր:

Բայց ինչ որ ալ ըլլան այս դիտողութիւնները, հայ Անաստաս վանականին կազմած Յուդայը իր մեծ արժեքէն բան մը չի կորսնցներ. այդ փոքրիկ եւ հնամենի գրուածքը կը ցոյցնէ Հայ-Երուսաղէմի անցեալ փառքը ու հայ իշխանաւորներու հաւասքը զոր ցոյց տուին բիւզանդական տիրապետութեան ժամանակ, երբ Ս. Քաղաքը կը պանծար հոյակապ եկեղեցիներով ու վանքերով ու խաչին նշոյլները կը հառագայթէին սրբավայրերու կարողիկէներուն վրայ: Անաստաս վանական միակն է որ կը հաղորդէ Հայ-Երուսաղէմի փառքը թէ՛ մեզի եւ թէ՛ զալի սերունդներուն, ուրոն պիտի կարենան պահել իրենց մէջ այդ փառքը զգալու ոյժը ու պիտի սիրեն համակուիլ անով որ ոյժը եւ զօրութիւնն է Հայաստանեայց եկեղեցիին եւ Հայ Ազգին:

\* \* \*

Երուսաղէմի մէջ Նախնեաց սիրացած մեծ փառքէն հաշակ մը սալու համար ձեռնարկեցի այս աշխատութեան. այն օրէն ի վեր որ Երուսաղէմ հաստատուեցայ բուն սեր մը գոյացաւ իմ մէջս կարելիութեան սահմանին մէջ գրելու համար Ս. Քաղաքին եօթանասուն հայկական վանքերու պատմութիւնը: Երուսաղէմի արդի հայ պատմ.